5-ՐԴ ՆԻՍՏ

8 օգոստոսի, հինգշաբթի, երեկոյան, 1918թ.

Նախագահ՝ Ավ. Սահակյան

Ներքին գործոց նախարար Արամ - Տալիս է համառոտ զեկուցում պարենավորման և գաղթականական գործերի մասին: Ապա պատասխանեց սոց-հեղափոխական ֆրակցիայի հարցապնդումին՝ չորս թուրք գյուղերի ցանքերը չորս անձնավորությանց տրվելու մասին: Նախարարն ասաց, թե այդ խնդիրը պարզելու համար կարևոր է ի նկատի ունենալ այն ժամանակը, երբ տեղի ունեցավ պայմանագրությունը: Թուրքական այդ գյուղերի բերքը բրինձ է, որ աճում է բացառիկ պայմաններում. եթե ուշացնեինք այդ մարդկանց հետ պայման կապել, բրինձի ամբողջ բերքը պիտի փչանար և մեր երկիրը պիտի զրկվեր նրանից: Գյուղացիները այդ պայմանը կնքելուց հետո միայն դիմել են, որ այդ բերքը իրենց տրվի:

Նախարարի բացատրություններից հետո տեղի ունեցան բուռն և երկարատև վիճաբանություններ և ի վերջո խորհուրդը ընդունեց հետևյալ բանաձևը.

Լսելով հարցապնդումը և կառավարության բացատրությունները՝ խորհուրդը անցնում է հերթական հարցերին:

Այնուհետև *ֆինանսների նախարարը** առաջարկեց առ հաշիվ 5 միլիոն ռուբլի հատկացնել պարենավորման (2 միլիոն), գաղթականների (1 միլիոն), զինվորական վերակազմության (1 միլիոն), և այլ անհետաձգելի կարիքների համար, մինչև որ կազմվի պետական ելևմուտքը: Վիճաբանություններից հետո խորհուրդը որոշեց կատարել նախարարի խնդիրը:

«Զանգ», 17 օգոստոսի 1918թ.